4599

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիդյան

«25» 03 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0027-22

Ձեռնարկողը՝ *«ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս» ՍՊԸ*
ք. Երևան Գրիբոյեդովի 11-1

Գործունեությունը՝ ***Մովսես Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոցի նոր մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արմավիրի մարզ,

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0027-22

<<25**>>** 03 **2022թ.**

Մովսես Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոցի նոր մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ «Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արմավիրի մարզ, ք.Վաղարշապատ

Ներածական մաս. Քաղաքաշինության կոմիտեի պատվերով՝ նախատեսվում է Արմավիրի մարզի Զվարթնոց թաղամասի Տեր-Գաբրիելյան փողոց հասցեում գտնվող Մովսես Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոցի նոր մասնաշենքի կառուցում:

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ դպրոցի նոր մասնաշենքի կառուցման աշխատանքներն իրականացվելու են անշարժ գույքի սեփականության իրավունք ունեցող 1.8հա ընդհանուր մակերեսով հողամասում: Հողամասի նպատակային նշանակությունը հասարակական կառուցապատում: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 7) կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի տարածքում: Տեղակայված է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում: Գեոմորֆոլոգիական տեսակետից գործունեության տարածքը նախալեռնա-թեքվածքային, թույլ ալիքաձև հարթավայր է: Տարածաշրջանի ռելիեֆը հարթ է, հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք բավական հավասարաչափ թեքվածությամբ, ծովի մակարդակից 900մ բարձրության վրա:

Համաձայն նախնական գնահատման հայտի /այսուհետ՝ Հայտ/ տարածաշրջանը հիդրոերկրաբանական տեսակետից գտնվում է Արարատյան արևելյան ջրավազանում: Տարածաշրջանի գլխավոր ջրային երակը հանդիսանում է Սելավ-Մաստարա գետը, որն

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

ունի սեզոնային բնույթ և բացառապես սնվում է հալոցքային և անձրևային ջրերով: Գետը գործում է միայն ինտենսիվ ձնհալերի և վարար տեղումների ժամանակ:

Տեղանքի ինժեներաերկրաբանական պայմանները գնահատվում են բարենպաստ նախագծվող դպրոցի շինարարական աշխատանքների իրականացման համար:

Նախատեսվող գործունեության տարածքին ամենամոտ գտնվող հատուկ պահպանվող տարածքը «Որդան կարմիր» պետական արգելավայրն է, որը գտնվում է 20կմ հեռավորության վրա:

Բնութագրվող տարածքը գտնվում է արդեն իսկ յուրացված և զարգացած քաղաքային միջավայրում, ուստի տեղանքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիները:

Համաձայն Հայտի նախատեսվում է գործունեության տարածքում ապամոնտաժել թիվ 10 դպրոցի շուրջ 4800մ^2 մակերեսով շինությունը և փոխարենը կառուցել նոր՝ շուրջ 6100մ^2 ուսումնական և 40մ^2 օժանդակ մակերեսներով շինություններ: Նախագծված կառույցը նախատեսվում է ավագ դպրոցի համար՝ 6-7 զուգահեռ հոսքերով և նախատեսված է 500 աշակերտի համար:

Ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի դպրոցի հողատարածքը գտնվում է բնակավայրերի հասարակական կառուցապատման գոտում դպրոցի կառուցման համար հատկացված հողամասի մակերեսը 18617մ^2 է, որից՝

- կառուցապատման մակերես - 4091.8մ^2,
- բարեկարգվող մակերես - 14525.2մ^2, այդ թվում՝
- ասֆալտապատ տարածք՝ - 4035մ^2,
- սպորտային հրապարակ և խաղահրապարակներ - 2115մ^2,
- կանաչապատում - 5047.2մ^2,
- գոյություն ունեցող մրգատու այգի - 3328մ^2:

Դպրոցի ապամոնտաժման և վերակառուցման աշխատանքների արդյունքում այն կունենա 7 մասնաշենք՝ A, B, C, D, E, F և G, որոնք միմյանցից բաժանված են լինելու սեյսմիկ կարաններով: B մասնաշենքը երկու հարկանի է, G մասնաշենքը երեք հարկանի, իսկ A, C, D, E, F, մասնաշենքերը մեկ հարկանի են: Մասնաշենքերից յուրաքանչյուրը հատակագծում ունի հետևյալ առանցքային չափերը՝

A մասնաշենք - 31.4 մ x 16.55 մ (519.67 մ^2), բարձրությունը՝ 3.9 մ,
B մասնաշենք - 31.4 մ x 37.3 մ (1171.22 մ^2), բարձրությունը՝ 3.3 մ,
C մասնաշենք - 19.6 մ x 16.1 մ (103.24 մ^2), բարձրությունը՝ 6.1 մ,
D մասնաշենք - 11.6 մ x 8.9 մ (203.24 մ^2), բարձրությունը՝ 3.6 մ,
E մասնաշենք - 16.1 մ x 14.7 մ (236.67 մ^2), բարձրությունը՝ 3.6 մ,
F մասնաշենք - 24.5 մ x 16.1 մ (394.45 մ^2), բարձրությունը՝ 6.1 մ,
G մասնաշենք - 40.6 մ x 14.7 մ (596.82 մ^2), բարձրությունը՝ 3.35 մ:

Դպրոցի կառույցների կրող համակարգերը միաձույլ երկաթբետոնե կոնստրուկցիաներով է: C և F մասնաշենքերի ծածկն իրականացված է պողպատե կոնստրուկցիաներով:

Համաձայն Հայտի մասնաշենքերի ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացներն իրականացվելու են տարածքում գտնվող սեփական կաթսայատնից: Տաք ջուրն իրականացվելու է էլեկտրական ջրատաքացուցիչների միջոցով: Մովսես Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոցը գործում է 1970 թվականից և ունի ջրամատակարարման

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
«ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT CENTER» SNCO
02543103
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
ՀՀ ԵՐԵՎԱՆ * РА ЕРЕВАН * RA YEREVAN

(այդ թվում ոռոգման) ու ջրահեռացման համակարգեր: Ջրահեռացման արտաքին համակարգում նախատեսվում է կառուցել ինքնահոս կոյուղագիծ Φ150մմ պոլիէթիլենե խողովակներով և միացնել գործող կոյուղագծին: Կոյուղագծի ընդհանուր երկարությունը կազմելու է 287մ: Նախատեսվում է կառուցել 19 հատ դիտահոր: Կոյուղատար (ներառյալ անձրևաջրերի) համակարգն օգտագործվելու է թե շինարարության և թե դպրոցի հետագա շահագործման ընթացքում՝ առաջացող կեղտաջրերի/հոսքաջրերի հեռացման նպատակով:

Աշխատանքային նախագծով նախատեսվում է 200լ ծավալային ջերմափոխանակիչով էլեկտրական ջեռուցիչով 1500Վտ հզորությամբ արևային համակարգի տեղադրում թիվ 10 դպրոցի մասնաշենքի տանիքին:

Դպրոցի երկու մասնաշենքերի (G և F) տանիքներին տեղադրվելու է արևային ֆոտովոլտային կայան, ինչն իրենից ներկայացնում է 50.4կՎտ ցանց ներբեռնող հզորության համակարգ, որը կազմված է՝ (PV)-420 Վտ հզորությամբ, միաբյուրեղ, թվով 120 հատ վահանակներից, որոնց ընդհանուր հզորությունը 50.4 կՎտ է:

Շինարարության ժամկետը հաշվարկվել է 24 ամիս, որից նախապատրաստական աշխատանքների տևողությունը 1 ամիս, ապամոնտաժման աշխատանքների տևողությունը 5 ամիս:

Նախատեսվող դպրոցի վերակառուցման աշխատանքների արդյունքում իրականացվելու են հողային աշխատանքներ, ընդհանուր առմամբ փորվելու է 4305.7մ^3 ծավալով հող, որից 4204.8մ^3 ծավալով հողը օգտագործվելու է հետլցման աշխատանքների իրականացման համար, իսկ 100.9մ^3 ծավալով հողը տեղափոխվելու է քաղաքային աղբավայր: Հետլցման համար օգտագործվող հողից (4204.8 մ^3) 1674 մ^3 ծավալով հողը բուսահող է, որը օգտագործվելու է տեղում՝ բարձրակարգ ծառերի տնկման, ծառերի արմատների ամրացման, տարածքի բարեկարգման աշխատանքների համար:

Համաձայն Հայտի դպրոցի ապամոնտաժման և կառուցման աշխատանքների ընթացքում կառաջանան հետևյալ տեսակի և ծավալի թափոններ՝ շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ մինչև 4208 տ, չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ (այդ թվում թուջի և/կամ պողպատի փոշի), մինչև 0.1 տ, օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալար մինչև 0.05 տ, չտեսակավորված ալյումին պարունակող թափոններ մինչև 0.03 տ, կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ 0.3 տ:

Որպես երկրորդային հումք օգտագործվող թափոնները, մասնավորապես՝ սև և գունավոր մետաղների ջարդոնը, կփոխանցվեն համապատասխան լիցենզավորված կազմակերպությունների, իսկ շինարարական և կենցաղային աղբը կփոխադրվի Վաղարշապատի համայնքային աղբավայր:

Դպրոցի շահագործման փուլում առաջացող կենցաղային աղբը պարբերաբար հեռացվելու է տարածքից՝ Վաղարշապատի համայնքի աղբահանող կազմակերպության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարության ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ՝ բուլդոզեր, ավտոբետոնապոմպ, էքսկավատոր, ավտոինքնաթափ, ավտոբետոնախառնիչ, ամբարձիչ, եռակցման ագրեգատ և այլն: Նախատեսվող գործունեության շինարարության համար անհրաժեշտ բետոնը և շաղախը կառաքվեն մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացած տրանսպորտային միջոցներով: Շինարարական աշխատանքների կատարման ժամանակ օգտագործվելու են

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

շինանյութեր՝ բետոն, ամրանային ձողեր, երեսապատման սալիկներ, ներքին հարդարման, ջերմամեկուսիչ նյութեր և այլն:

Բարեկարգման աշխատանքների շրջանակում նախատեսվում է կատարել ասֆալտապատման և կանաչապատման աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել սպորտային հրապարակի և խաղահրապարակների բարեկարգում:

Ըստ հայտի դպրոցի նոր կառուցվող շենքի տարածքի կանաչապատման համար նախատեսվում է հատել, տեղափոխել, տնկել նոր ծառեր և տեղադրել սիզամարգեր: Գոյություն ունեցող դպրոցի շենքի քանդման և շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ տարածքում առկա ծառերը խոչընդոտ են հանդիսանում տեխնիկայի տեղաշարժման համար, իսկ դրանցից որոշները գտնվում են նոր կառուցվող շենքի տարածքում: Գոյություն ունեցող ծառերից 68-ը ենթակա են հատման, որոնցից մի մասն անկենսունակ են, մյուս մասն անհնար է տեղափոխել՝ մեծ չափեր ունենալու պատճառով, իսկ 17-ը ենթակա են վերատնկման: Նախատեսվում է հատվող ծառերի փոխարեն և կանաչ գոտիներում տնկել նոր ծառեր՝ հացենիներ, և արևելյան թույաներ: Նշված ծառերը միմյանցից ունենալու են 3-ից 4.5 մ հեռավորություն:

Շինարարական աշխատանքներից հետո դպրոցի կանաչապատ տարածքների ոռոգումն իրականացվելու է տարածքում առկա ոռոգման ցանցից, իսկ ջրահեռացումն իրականացվելու է առկա ջրահեռացման համակարգով:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ՝ մինչև շինարարության ավարտը: Համաձայն Հայտի՝ նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են հայտի միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում, այդ թվում՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով կատարել շինհրապարակի պարբերաբար ջրցանում,
- շինարարության ընթացքում օգտագործվելու է ժամանակակից տեխնիկաներ, տեխնիկապես սարքին մեքենաներ և գործիքներ,
- շինհրապարակում փորված գրունտի օգտագործում որպես ետլիցք՝ հարթեցում և բարեկարգում,
- շինհրապարակում սև մետաղների և գունավոր մետաղների ջարդոնը փոխանցել լիցենզավորված կազմակերպություններին,
- փոշու, աղմուկի և թրթռումների նվազեցման նպատակով ուղաթիռների թռիչքների մեկնարկը և վայրեջքը իրականացնել հարևանությամբ գտնվող ձորի վրայով,
- աղմուկ առաջացնող աշխատանքներն դադարեցնել գիշերային ժամերին,
- շինարարական տեխնիկայի կանոնավոր ստուգում և տեխնիկական սպասարկում,
- մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով կանոնավոր մոնիթորինգի իրականացում,
- բոլոր մեքենաների և շինարարական տեխնիկաների անվադողերի լվացում մինչ շին. հրապարակից դուրս գալը,
- բնահողի պահումը շին. հարթակում ծածկված վիճակում՝ մինչ օգտագործումը,
- աշխատանքների և արտակարգ իրավիճակների անվտանգության ապահովում և այլն:

Պատճառաբանական մաս. Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Արմավիրի մարզի, Վաղարշապատի համայնքապետարանում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ «Առողջապահության», «Արտակարգ իրավիճակների», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» նախարարություններից, Քաղաքաշինության կոմիտեից, Կադաստրի կոմիտեից, Արմավիրի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել «Հայտի» լրամշակումներում:

Ամփոփելով Հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցություններն, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Դպրոցի նոր մասնաշենքի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն և 2017 թվականի մարտի 27-ի թիվ 12-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:
2. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա ցերեկային ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների բեռնվածությունը:
3. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝
- շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- բետոնը մատակարարել պատրաստի վիճակում մոտակա բետոնահանգույցից, բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը,
4. Դպրոցում արտադրական վտանգավոր օբյեկտներ (կաթսայատուն, վերելակ) նախատեսելու դեպքում աշխատանքային նախագիծը ներկայացնել նաև տեխնիկական անվտանգության փորձաքննության:
5. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Արմավիրի մարզի, Վաղարշապատի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

6. Ինչպես ներկայացված է Հայտում՝ դպրոցի տարածքում կան անկենսունակ, չորացած և թեքված թվով 68 ծառեր, որոնք վտանգ են ներկայացնում երեխաների համար, ուստի աշխատանքային նախագծով նախատեսվում է հատել այդ ծառերը, փոխարենը տնկել բարձրակարգ նոր ծառեր /հացենիներ և արևելյան թույաներ/: Մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը անհրաժեշտ է համապատասխան համաձայնեցումները և թույլտվությունները ձեռք բերել Վաղարշապատի համայնքապետարանից:
7. Տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել Արմավիրի մարզի, Վաղարշապատի համայնքապետարանի կողմից հաստատված բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի համաձայն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:
8. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի/մշտադիտարկումների պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
9. ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Արմավիրի մարզի, Մովսես Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոցի նոր մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
առաջին կարգի մասնագետ՝ Ն.Մովսիսյան